

ԱՐԵՒԱԾԱԳԻ ՍՊԱՍՈՒՄԸ

Մենք Քայլում ենք արդիականութեան սառը ասփալտի վրայով, փնտողելով յաւերժութեան կորցրած աւազահատիկները: Ճանապարհին լսում են յուսահատութեան նիշեր՝ Աստուած մնող է:

Ոչ, Նիշշէն չեր, որ առաջինը բացայացնեց այս մտածելակերպը: Կային ուրիշները, որոնք ապրեցին այն՝ ինչի մօս: Եւ հաղորդակից դարձան մեկ այլ ճշմարտութեանը: Քրիստոս Ցարեաւ ի Մեռելոց:

Հայ ժողովուրդի ճանապարհը – խաչի ճանապարհն է յուսահատութիւնից դեպի յոյս, խաւարից դեպի լոյս, մահից դեպի անմահուրիւն:

Խաչը մեր շնչառութիւնն է, մեզ գօրացնող ոյժն ու լոյսն է, մեզ հանգստացնող յոյսն է: Մենք ազգ չենք, մենք Եկեղեցի ենք: Մենք սուրբ հոգու բնակարանն ենք: Մեր անցեալը մեր արմատների պահապանն է: Ներկան՝ մեր արմատների գուրգուրուած ծինն է: Ապագան՝ բացուած ծաղիկի բուրմունքն է: Որպէս զի այդ բուրմունքը ներշնչենք, պէտք է իմանանք ով ենք մենք, որտեղից ենք գալիս, եւ դեպի ուր ենք գնում:

Եշմիածին, Արարատ, Լուսառիչ, Գեղարդ, Գանձասար ... Այս բոլորը անուններ չեն, կենդանի իրականութիւններ եւ մարդիկ են: Դա մեր անցեալն է, որը մեզ քննում է:

Հայաստանը փորձում է այս բոլոր հարցերի պատասխանը գտնել՝ ապրել: Ինչպէս Յիսուսը խաչի վրայ, մեր Հայութնիքը մերկ եւ անպաշտպան, վիրաւորուած եւ լիուած: Բայց նա ազատ է: Նա ինքն է ընտրել այս ճանապարհը՝ միայնակ եւ փրկարար: Դեպի ուր կը տանի այն՝ չգիտեմ: Սակայն գիտեմ դեպի ուր դեպի նա, որ Արարատ լեռի գրկում մեզ կեանք պարգևեց:

Հայաստանը Աւագ Շարար է ապրում Աւագ շարբուայ Շարար օրը: Օր, որի մասին ոչ մի խօսք չենք գտնում նոր Կտակարանի մէջ: Ուրբար ամենը արդէն կատարուած էր: Յոյզը, լոյսը սպառուած էր, իսկ Ցարութեան լուրը դեռ չեր հնչել այս երկրի վրայ: Ոչ ոք չգիտեր թէ ինչ է կատարուելու Կիրակի լոյս առաւօտը, եւ մինչ այդ առաւօտը դեռ մեկ երկար օր կար, լի անորոշութեամբ եւ վշտով:

Այս լուր գաղտնիքն է ապրում այսօր Հայաստանը: Յոյզը եւ համբերութիւնն մեզ օգնական: Արեւածագը մօս է:

ԳՈՀԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Փարիզ, 11 Յունիս 1995